ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Տեղեկացնում ենք, որ Գավառի պետական համալսարանի ամենամյա՝ 24-րդ գիտաժողովը կկայանա **2021 թվականի հուլիսի 3-ին /սկիզբը՝ ժամը 11.00-ին/, առցանց ձևաչափով:**

Մասնակցության համար անհրաժեշտ է մինչև **2021 թվականի հունիսի 20-ը** լրացնել էլեկտրոնային հայտ՝ հետևյալ հղումով. http://gsu.am/hy/electroniapplication/ և զեկուցումներն ուղարկել ԳՊՀ info@gsu.am, infogsu@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեներին: Ստորև ներկայացնում ենք տեխնիկական պահանջները.

1. գիտական զեկուցումը պետք է լինի 5-ից 10 էջի սահմաններում, հայերեն, ռուսերեն կամ անգլերեն լեզուներով՝ երկու օրինակից, համակարգչային շարվածքով B 5 (17սմ x 24սմ) չափի տպագրական թղթի վրա, **«GHEA Grapalat»** տառատեսակով, 1,12 միջտողային հեռավորությամբ, թղթի բոլոր կողմերից 18 մմ լուսանցքով, էջադրումը՝ էջի ներքևում (footer), կողմնորոշումը՝ կենտրոն, սահմանները՝ 1սմ:
2. Վերևում նշել վերնագիրը՝ 10,5 տառաչափով (մեծատառերով, թավ՝ Bold):
3. Վերնագրից մեկ տող ներքև՝ աջ անկյունում, նշել հեղինակ(ներ)ի ազգանունը, անունը (թավ), գիտական աստիճանը և կոչումը (սկսել մեծատառով, նոր տողից), զբաղեցրած պաշտոնը (սկսել նոր տողից):
4. Մեկ տող ներքև՝ 10,5 pt տառաչափով, տրվում է հեղինակի էլեկտրոնային փոստի հասցեն:
5. Մեկ տող բաց թողնելով՝ 10 pt տառաչափով, շեղատառ (italic) և թավ ներկայացվում է զեկուցման ամփոփագիրը (аннотация, abstract), որտեղ 120-170 բառի սահմաններում պետք է արտացոլվեն հետազոտության նպատակները, խնդիրները, մեթոդները, ինչպես նաև հեղինակի հիմնական եզրահանգումները:
6. Մեկ տող բաց թողնելով՝ անհրաժեշտ է գրել «Բանալի բառեր» և նշել 7-10 բանալի բառեր:
7. Բաց թողնելով երկու տող՝ շարադրել աշխատանքը, վերջում նշելով նաև խմբագրական խորհուրդ ներկայացման և գրախոսման օրը, ամիսը, տարին, օգտագործված գրականության ցանկը, գրականության հղումները:
8. Լատիներեն և հունարեն տառերը, սիմվոլները, ինչպես նաև բանաձևերն անհրաժեշտ է հավաքել «Microsoft Equation Editor 3.0» ծրագրով, նկարների բացատրությունները և աղյուսակները (ներկայացնել նկարի տեսքով)՝ 10

տառաչափով, ինչպես նաև զեկուցման շարադրանքի լեզվից տարբեր վերը նշված երկու լեզուներով՝ զեկուցման վերնագիրը, ամփոփագիրը, հեղինակ(ներ)ի ազգանունը, անունը, գիտական աստիճանը և կոչումը, զբաղեցրած պաշտոնը:

9. Անհրաժեշտ է ներկայացնել նաև կարծիք զեկուցման մասին, համապատասխան ամբիոնի կամ գիտական կազմակերպության երաշխավորությունը:

Հարցերի դեպքում կարող եք զանգահարել հետևյալ հեռախոսահամարներով՝ (0-60) 46-02-01, (0-60) 46-04-03, (0-60) 46-12-43:

Շնորհակալություն:

ԳՊՀ գիտաժողովի կազմկոմիտե